

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 16

Գ. ՇՐՋԱՆ

20 ԱՊՐԻԼ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթաթերթի օտարական բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բաժանորդագիր և գաղտնիքուն համար Փիսուն 22, Կանխիկ վճարելի: Արտասահման 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթաստական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամեայ բաժանորդագրութիւն լրկողունոյ: Բաժանորդագրութիւնները կը սկսին առկա ամսոյ մէկէն: Մասիս հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առաւ: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ասացած են, պէտք է խոյն ինկնեն խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ աշխատեալ առարկութիւնները անհատութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Չեմք կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیّه آغوب ماطیوسیان مطبعه سنده «ماسیس» غرضی اداره سنه

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Rédaction de la Revue MASSIS

Տպարան Զ. Մատթէոսեան

Imprimerie H. Matteosian

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

CONSTANTINOPLE

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՏ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 200

Կալաթա-Սեբալի Լիսեին դեմ

ԳԵ. ԵՇ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-
խեմ մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. ՈւՐ. օրերը Եկեմ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամագրութեամբ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ (Հետաքրքրաշարժ
Վեպ երեք հատորով) Թարգմ. Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ,
Վաճառման կեդրոնադեղին է Պաղատալեան Գրատունը,
կը գտնուի նաեւ ամէն հայ գրավաճառներու քով:

Գին 15 դրուշ:

9—10

ՊՐՈՒՍԱՅԻ ԽԱՎՆՈՒՆԵՐԸ ԳՈՐԾԱԾԵՑԷՔ

ՊՐՈՒՍԱՅԻ ԽԱՎՆՈՒՆԵՐԸ ԽԵՐԱԿԱԿԱՆ

Ներէն աւելի ԴԻՄԱՑԿՈՒՆ ըլլալուն առ.

յաւիտյս չկայ, հետեւապէս աւելի ԱՅՈՒՆ

են:

Ա. ՄԱՐՏԻԿԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՈՅ

ՊՐՈՒՍԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լաւագոյնը ըլլալու համարը կը վայելեն 30
տարիէ ի վեր:

Դիւնը

206—29, Եկեմ Զարեք, Մահմուտ Փաշա, Կ. Պոլիս

ԻԻՆԻՅՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828—1829

ՀՐԴԵՀԻ ԶԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ Վեպ	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ԶԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ Վեպ	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000 »
Գրամագլուխ եւ պահեստը	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիօն» ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաժշտաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵՆԻ ԶԷ ԳՏՆԵՆԻ ԱՐԵՒԵՆԻՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ զինքով: Նպաստաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան
պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի
ապահովագրութիւնը ԶԵՐՈՒ ԵՒ այն վնասներէն եւ յուսախաբանութիւններէն, որոնց կ'են-
թարկուին միշտ այն անձինք, որ ամաբաժիններու բարդման (accumulation des
bénéfices) ՅՈՒՒ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեւար գործող ընկերութեանց կ'ապահովա-
գրուին:

Ընկերութեան գրաստանն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ
Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան, Օսմ. Պաշայի ղիմացք
Խորձակութիւնը Թուրքիոյ զինաւոր քաղաքաց մէջ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 20 ԱՊՐԻԼ 1902 —

ԹԻԻ 16

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրականության ազդակները եւ գրականական բնդվումներ. ՄԱՌՇԵՂ, ՎԱՐԳԱՊԵՏ: — Մարտի . . . երբ կը հասնի. Գ.Ր. ՄԱՆԻՍԱՍ: — Բանաստեղծութիւններ. Անդրապարձում. Մ. ՈՒ. ՂՈՒՐԵՍՆ: — Հեղուկիւն. Վ.: — Շաբաթական կեանք. (Զատիկի տպագրութիւններ). ՍԳԷԼԼԱ: Ներքին. (Գերմ. Վեպ) ԲՍՈՒՆ, ՀՍՅԱԼ: — Եռուսեմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԸ

ԵՒ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԸՆԴՎԱԶՈՒՄՆԵՐ

(Ս.Ո.Ս.ԶԻՆ ԵՕԳՈՒՍԻՆ)

Անհատի մը դրական խզումը իր ապրած զարարչանքին հետ, մէկն է այն հիմնական զարտուղութիւններէն, որոնք շատ անատոյգ ապագայ կը խոստանան մաքի ու դրչի արատդրութեան մը համար: Միեւնոյն դարուն մէջ ապրող հասարակութիւնն է որ պիտի արատդրէ իր հեղինակներն ու ընթերցողները: Այս երկու գաստկարգն ալ մտածելու կերպի եւ համոզումներու անա՛նկ առնչութիւններ ունին իրարու հետ, եւ ճաշակի անա՛նկ հանդիտութիւններ, որոնք իրր դարու եւ միջավայրի բարոյական ժառանգութիւնները հանրութեան, իրենց հետ պիտի բերեն, կամ ճակատագրորէն դատապարտուած պիտի ըլլան բերելու գրականութիւն մը, որուն նախասիրութիւնը ունեցած ըլլայ նոյն այդ ժողովուրդը: Դարուն ժողովուրդն է որ ուղղութիւն կուտայ իր գրագէտներուն եւ ասի՝ մեծ համեմատութեամբ:

Այս երեւոյթը առաջ կուգայ կարեւորագոյն պատճառէ մը:

Անհատները իրենց նկարագիրն ունին,

ազգերն ալ ունին իրենց նկարագիրը, եւ այդ ցեղային ու անհատական յատկութիւնն է որ պիտի բնորոշէ՝ նոյն իսկ գրականութեան, նոյն իսկ կենցաղավարութեան ու ճաշակի խնդիրներու մէջ՝ անհատական ու տոհմային առանձնայատկութիւններու զանազանութիւնները իւրաքանչիւր մարդու կամ իւրաքանչիւր ազգի մօտ: Այդ անհատական նկարագրի գոյութիւնը կը հարկադրէ նոյն կամ տարբեր ազգերու անհատները իրարու մէջ փնտռել նկարագրի սեռ մը, զանազաններու մօտ ինքնուրոյն բնատուական համամասնութեան մը հանդամանքով՝ մարդկութեան մէջ ի մի ձուլելու համար զիրենք, եւ մարդկային մաքի ու հանճարի ձեռներէցութիւններու մէջ յորինելու մարդկային homeopathien կամ alliterationը մարդկային անհատներու, որոնք յայտուն առուերը պիտի մնան մարդկութեան, այդ ամէն դարերու ծիւղն, վէտվէտուն շաբադրութեան տուեալ նիւթին (եթէ կարելի է այս նմանութեամբ սրակել մարդկութիւնը), միշտ կրկնուած ամէն դարերու մէջ, եւ

իրարմէ զանազանուած միմիայն ոճի եւ բացատրութիւններու զեղեցիկութիւններով եւ նրբացումներով :

Անհատներու եւ ազգերու նկարագրի գոյութիւնը սակայն ամբողջովին չպիտի կրնայ բացատրել զանազան ժամանակներու կամ դարաշրջաններու մէջ երեւան եկած ինքնութոյն մտածումի ու գործունէութեան բներեւոյթներուն զանազանութիւնները — որովհետեւ համայնք մը միշտ միեւնոյն նկարագրով չէ որ կ'ապրի — եթէ իբր ընդունուած credo չզաւանիք թէ անհատներու եւ ազգերու նկարագրը գոյութիւն ունենալով հանգերձ , այդ միեւնոյն ազգին ու անհատներուն հանդէպ դարաշրջաններն ալ ունին իրենց յսակ՝ սեփական նկարագիրը : Առանց այդ դարաշրջաններուն նկարագրի գոյութեան անհրաժեշտութիւնը ընդունելու , չպիտի կրնանք որոշ կերպով ըմբռնել զրականութեան այն հակոտնեայ ուղղութիւնները , որոնք զանազան ժամանակներու մէջ՝ իբրեւ տիրող անհրաժեշտ տարրը կը ներկայացնեն Satyriqueն ու Romantiqueը , թունդ կրօնականն ու décadent բացվրայութիւնները : Առանց այս ճշմարտութեան՝ նմանապէս չպիտի կրնայինք իսկական գաղափար մը կազմել այն տարրերութիւններու մասին որոնցմով կը զանազանուին Ֆրանսական զրականութեան մէջ , զօրօրինակ , Լուի Ժ.Ի եւ Լուի ԺԵ.ի ինչպէս նաեւ ետքի դարաշրջաններուն իրարմէ ունեցած զանազանութիւնները զրական տեսակէտով :

Այսպէսով դարու մը հեղինակը դատաւարուած պիտի ըլլայ՝ ճակատագրօրէն՝ ճշգրիտ հաւատարմութեամբ պատկերացնել միայն իր ժամանակը , իր շուրջի մարդերուն մտածումի կերպերը , անոնց հետ ինքզինքը կատարեալ ներդաշնակութեան ու համերաշխութեան մէջ դնելով հիմնապէս : Այդ դարուն ու ողիւն կամ նկարագրին հպատակելու անհրաժեշտութիւնն էր անշուշտ , որ ծնունդ տուաւ՝ Իտալիոյ ասպետական դարաշրջանի *solfesica* դասականութեան մը . այդօրինակ , բարացուցական (*caractéristique*) նախասիրութիւններն էին որ իրենց ժամանակներուն

ծնունդ տուին՝ նմանապէս՝ ողբերգակ քնարերգակ թատերագութիւններու , ապրիլ ազդերու մօտ — Գրականութեան այս բոլոր անսակներն ալ հարադատ ծնունդ են իրենց դարաշրջաններու մտածումներուն եւ հակումներուն :

Ինչպէս վերը ըսինք , գրական ասպարէզին մէջ դարաշրջանի պահանջումներուն զէնքով ընդգլում մը , կամ նոյն ատեն համայնապէս ընդունուած գրական *dogme*ներու հետ խում մը , ո' եւ է երաշխաւորութիւն ցոյց չտալու յաւերժացումի այն հեղինակին , որ իր քաղաքէն մէջ կ'արտադրէ միայն ապագայ դարերու յարմար խորհրդածութիւններ : Այդօրինակ ընդգլուող հեղինակներու խորհրդի եւ ոճի ընդառնադրականը (*précocité*) ո' եւ է իրական արդիւնք մը չկրնալ ցոյցնելէն զամուր մոռացութեան մը կը դատաւարէ զիրենք , իրենց ժամանակակիցներէն ու յետնորդներէն հաւատարապէս . քանի որ անոնք չինքնընդհատ չպիտի կրնան զիրենք հիւրընկալել իբրեւ իրենցմէ սիրուած հեղինակներ , եւ վերջինները պէտք չպիտի զգան զիրենք հիւրընկալելու , քանի որ իրենց նմանները այլեւս նշանաւորութիւններ չպիտի կրնան նկատուիլ իրենց մէջ , իրենք որ այդ հեղինակներու նմանները հասարակ մտքերու պէս հազարաւորներով պիտի արտադրեն իրենց ծոցէն :

Ահա թէ ինչո՞ւ համար անգլիական գրականութիւնը , զօրօրինակ , Աննա թագուհի դարաշրջանէն էտիքները կը նախադասէ Ստալի հակառակ այն իրողութեան , ըստ որում այդ վերջինը եղաւ նախակարողաբար նոյն զարդարականութեան տալու իր կատարելութեան անհրաժեշտ նրբութիւններն ու հրապուրանքը : Ստալ իր դարաշրջանին՝ այն հեղինակը եղաւ ինչպէս կըսուի , որ առաջին անգամ ըլլալով փոքր զարաշրջանի նկարագրին ամբողջականութեանը , եւ ուղեւ իր շուրջիններէն անջատութիւն մը ըլլալ լեզուի եւ մտածումի տեսակէտով :

Տարբեր ազդերու մէջ իւրաքանչիւր դարաշրջանի գրականութիւն՝ ի հիման՝ համայնականութեանը իբրեւ հիմ ընդունելով հանգերձ , իր պատկանած շրջանին նկարագրելով

իր արտադրիչը մտածման ու խորհուրդի
կերպերուն, Բաժն, այդ հիմնական իրողու-
թեան նուազ կարեւոր ու մեքենական սլա-
ճաներէն մէկը կը համարի նաեւ անհատնե-
րու մօտ անսնուած կամաւոր նմանողութեան
(imitation) մը ձգտումը : Բաժն, այս նմա-
նողութիւնը սապէս կը բանաձեւէ, «Ա. կը
տեսնէ թէ Բ. ին ոճը կը յաջողի, ինքն ալ
զայն կը նմանցնէ» : Այս ուղղութեամբ կըր-
նանք բացատրել բանաձիգ ու խօշակման ձգ-
տումները մեր սկսնակ գրողներուն, որոնք
ամէնէն տարրական գրականութեան մը, սոսկ
դաւառական լրարեւութեան մը ձեւերուն մէջ
անգամ կը փորձեն վարպետներու ոճին ստորեկ
հետեւականութիւն մը, նմանողութիւն մը,
ուրիշ իրենց անյաջողութիւնը կը ծնի շա-
րունակ : Եւ արդէն այս պայմաններով կի-
րարութեամբ գրականութեան մը մէջ անխու-
սափելի պիտի մնայ այդ անյաջողութիւնը,
քանի որ նոյն հեղինակի ուսումնասիրութեանց
արդիւնքները կը ցուցնեն, թէ «մէկը լրջա-
գոյն եւ օգտակարագոյն եղանակաւ չպիտի
կրնայ խորհիլ, երբ կը ձգտի փոխ առնուած
ոճով (style) մը գրել» : Անհատական նկարա-
զիր մը դարաշրջանի նկարագիրին մէջ՝ մեծ
ղեր կը խաղայ հեղինակին ինքնութիւնը կա-
րենալ ճշգրտ համար :

Մասնաւորելով մեր խօսքը, ըսենք, թէ
դարաշրջաններու նկարագրին այդ ազդեցու-
թիւնը գրականութեան ու լեզուի բարեշրջում-
ներու մէջ, պիտի կրնանք յստակօրէն տես-
նել նաեւ մեր հին մատենագրութեան մէջ,
առանց բանազրօս ճիգերու մասնուելու : Մեր
գրականութեան եղանակաւորումի նախա-
քայլը, թարգմանչական առաջին périodeին,
առանց այլ եւ այլի, դաւառաբարբառի մը ար-
բողութիւնն է գրականութեան եւ ընտա-
նական-ընկերականութեան մէջ, առանց ան-
տեսելու՝ անշուշտ՝ գրչի տակ առած իր նրբու-
թիւնները : Վերոյիշեալ իմաստասէրին մտած-
ման կերպերը կը ջանան՝ եւ իրաւամբ՝ նմա-
նութեան եզրեր փնտռել տոհմային նկարագ-
րի մը ճեղքականութեան (localité) եւ դաւա-
ռաբարբառի մը միջեւ : «Տոհմային նկարագիր
մը անդակաւն (local) նկարագիր մըն է, որ
կրցած է յաջողիլ, ճիշտ ինչպէս տոհմային

լեզու մը ուրիշ բան չէ, եթէ ոչ յաջողած
տեղական դաւառաբարբառ մը : այսինքն
դաւառաբարբառ մը, որ ազդեցիկ եղած է
քան միւս դաւառաբարբառները եւ որ այս-
պէսով իր լուծը դրած է գրքերու եւ ընկե-
րութեան վրայ» :

Թէ լեզուն գաղափարներու հետ սերտ ու
ներքին առնչութիւն մը ունի, կամ թէ
տարբեր կերպով խօսելով, լեզուի մը «բա-
ռերը խորհուրդին բերդերն են», անուշադա-
ր՝ ու ակնյանդիման ճշմարտութիւն մըն է :
Սոյն ճշմարտութիւնը իր ետեւէն պիտի բերէ
երկրորդ մը, թէ լեզուի մը գրական դար-
գացումը կախում պիտի ունենայ միշտ գա-
ղափարի դարգացումէն : Որքան շեշտուած
ըլլայ վերջինին դարգացումը, նոյնքան աչ-
քառու հանգամանք մը պէտք է ստացած
ըլլայ՝ կանխաւ կամ միասին՝ առաջինին ալ
դարգացումը : Մասնաւորապէս Լատին լեզու-
ներու քերականական ձեւերուն յաջորդական
դարգացումները, եւ ընդհանրապէս հին լե-
զուներու իրենց synthétique վիճակը մերկա-
նալով analytique ձեւերու վերածուիլը, ու-
րիշ պատճառ չունին իրենց համար, եթէ ոչ
սա, թէ լեզուներն ալ կը պարզուին, կը
վճիռնան, որքան մարդկային խորհուրդներն
ու գաղափարները կը կորսնցնեն իրենց մթին
կնճռատութիւնները : Եւ այս դարգացումը
անհրաժեշտ գոյութիւնը պիտի մնայ առըն-
թեք մարդկութեան, քանի որ անոր ո՛չ լե-
զուն եւ ո՛չ գաղափարները à priori տեսչ-
ներ եղած են, եւ քանի որ մարդ կրցած է
գուրս նետուիլ իր ընդարձակութեան (innéité)
այն նեղ շրջանակէն, որուն մէջ, օրինակի
համար, ծիծեռնակ մը չպիտի կրնայ տարբեր
ձեւով ու կազմով շինել իր բոյնը, որուն այդ
աւանդական, նախապատմական կազմութիւ-
նը բնական օրէնք մը սուլեցուցած է իրեն :

Մարդկութեան պատմութեան մէջ՝ խոր-
հուրդի դարգացման տեսակէտով՝ ոչ միայն
դարաշրջանները իրարու չեն նմանիր, այլեւ
այդ դարգացման շրջաններու մէջ դարբերու
գարգացման ետեւառաջութիւններ ալ գոյու-
թիւն ունեցած են : Անհրաժեշտ պայման մը
չէ որ անպատճառ յաջորդ գար մը իր նա-
խորդէն աւելի դարգացած ըլլայ — թէպէտ

այս եղած ըլլայ ամէնուն փափաքը — : Զարգացած դարերու յետամնաց դարեր ալ կրցած են յաջորգել դժբախտաբար , եւ ասի կէտ մըն է , որուն վրայ դիտնական մտքեր համաձայն չըլլան թերեւս , բայց հեռաւոր անցեալներու դանազան փուլերը գէթ իրաւունք կուտան այդպէս խորհելու կամ ընդունելու :

Սոյն երեւոյթներէն վերջ , ա'լ մեզի համար դժուարին չափի ըլլար ընդունիլ , թէ տեղական ու դարաշրջանական նկարագիրներըն ալ իրենց կողմէն կրնան մեծ ազդեցութիւն գործել լեզուի մը քերականական ձեւերուն կամ նոյն լեզուի արմատ-բառերուն վրայ : Ինչպէս ընկերական կեանքի պատահարները կը ցուցնեն թէ նոյն լեզու յազմով ազդերը իրենց նպատեալներու նկարագրին ինչ ինչ կողմերը իւրացուցած են , տկար գաւառաբարբառներն ալ նմանապէս՝ որքան ալ յազմահարուած ըլլան ազդեցիկ դժուար դարաբարուէ մը , որ մայրենի լեզու ըլլալու կոչուած էր , ասոնք ալ իրենց կարգին փոխառած են բացատրութիւններու եւ քերականական ձեւերու հոյլ մը , որոնք խմորուած են նախորդին հետ նոյն եւ մի մարմինը կամ ամբողջութիւնը կազմուել համար :

Մեր տոհմային մատենագրական պատմութիւնը որոշ կերպով կը ցուցնէ այդ լեզուական բարեշրջումներու անհրաժեշտ փոփոխութիւնները , իրենց բոլոր ետեւառաջութիւններով , եւ որոնք հաւասարապէս ծնունդ առած են խորհուրդի յաջորդական խտտիւթութիւններէն կամ մթնոլմներէն , դարաշրջանի նկարագրէն եւ յազմուած գաւառաբարբառներու փոխանցումներէն : Մեր լեզուին մէջ այդ յաջորդական փոփոխութիւնները ի յայտ կուգան , ո'չ միայն անով , որ տարբեր դարաշրջաններու մէջ մեր լեզուն ու գրականութիւնը հարկադրուած է սրբկերել (հասարակաց արմատ բառերէն դուրս) , պարսկական , յունական , լատինական , թաթարական , ռուսական եւ թուրքական ոչ — տոհմային բառերու եւ բացառութիւններու խառնակոյտ մը , այլ եւ անով որ շատ զիւրիւն է՝ բանասէրին համար՝ գանազանել այն դարաշրջանները , ուր մաքուր գրարարը , յունածոյլ քերականական ձեւերը ,

գրաբարի անկուտը եւ ռամկօրէնի սկզբնաւորութիւնը կը տեսնուին յստակօրէն : Լեզուական evolutionին մէջ այս փոփոխութիւնները ոչ բնազատ ճիշդերու արդիւնք են , եւ թիւթեւ կամայականութիւններու ծնունդ , այլ արդասիքը իւրաքանչիւր դարաշրջանի նկարագրին , որուն ազդեցութիւնը չկրնայ մարդ իր վրայէն թոթուել , առանց արմատական ընդլուծումի մը : Առանց այս գիտական օրէնքներու պարտաւորցուցիչ ազդեցութեան եւ անոր ծնցուցած արդիւնքներուն , մեզի համար անհնար պիտի ըլլար բանայն հոգեբանօրէն վերլուծուած եւ իմացուած շղթայումը որ արդի մեր լեզուն կը կազմարգմանչական դարաշրջանի գրաբարին հետ երկուքն ալ ըստ երեւոյթին իրարու այնքան անման երկու ծայրեր , որոնցմէ վերջինը հաւաստեալ իր լինելութեան պատճառներով պիտի որոնէ իր անընդմիջական նախորդին մէջ եւ այսպէս շարունակաբար : Գրականութեան այդ միւլենոյն գիտական օրէնքներն որ , միւլենոյն ժամանակ իրենց նախորդ արդիւնքին վերլուծուած ցուցականութիւնով մեզի կ'իւրաշխաւորեն սա պարագան , թէ մը մեր գրաբարի այդ հնութիւնը — որ այսօր մէն սկսած է արդէն հին գրքերու լեզու մնալու դատապարտուիլ — պիտի մոռնէ ի վախճանականութեան մէջ , կորսուելու անյայտ ու անդարձ , եւ որուն վրայ ապագայ սերունդներ ալ պիտի նային սոսկ հնազանդ մը աշուրջութեամբ , ինչպէս այսօր կը նային սանագրիտի մը վրայ : Լեզունին ու բանական ալ ունին իրենց կեանքերը , որոնք մարդկային կեանքի օրէնքներէն տարբեր օրէնքի մը են : Եւ որ կը հպատակին : Լեզուններն ալ կը մեղմանան ապահովաբար . ահա Լաւոսիկերենը , որուն անունը միայն կը կարգանք Ս. Գրոց կառարտքին պատմութեան մէջ , առանց կարեւոր նախնայն ո'չ անոր բառերուն կազմութիւնը եւ ոչ իր քերականութեան ձեւերը , լեզուններու կորուստը արդիւնք է՝ մեծ մասամբ՝ մարդկային խորհուրդի եւ մաքի զարգացումներուն , ու լեզուններու կորուստը այն երեւոյթներէն , որոնք հնութեան մէջ միայն տեղի կ'ունենային . հիմա ալ ու տեղի վերջն ալ մարդկութիւնը հանդիսատեսը

տի մնայ այդ լեզուներու բնաչնչութեան ,
միայն սա տարբերութեամբ , որ անոնց ամ-
բողջական կորուստը շատ աւելի դանդաղորէն
տեղի պիտի ունենայ այսուհետեւ , չնորհիւ
զբաղան ճոխմաններու անկորուստ պահ-
պանումին , բայց հակառակ այդ յամրաքայլ

կորուստին , անոնք պիտի մեռնին ճիշդ այն
հիւանդներուն պէս , որոնք տարիներով ան-
կողմին կը դամուսին կը մնան յաւազար ու
անդամալուծուած , իրենց կեանքը քաշքշե-
լով , բայց որոնք վերջապէս կը մեռնին :

ՍՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

ՄՏՐԱ՛ԿԸ . . . ԵԹԷ ԿԸ ՀԱՃԻՔ

—Ա՛հ , բարեկամս , այդ պատկերէդ շատ
աւելի աղուոր էիր այն օրը երբ՝ ծովափին
մօտ , մամռապատ քարաժայռին վրայ նըս-
տած . . .

—Կը հաւատամ , Տիկին , բայց այն օրը՝
նկարչի առջեւ նստած էի (poser) , եւ պատ-
կեր մը՝ մեծութիւն ծախող (poser) մարդու մը
պատկերն է միշտ :

Սյուպէս պատասխանեց Ալֆօնս Քառ —
որ աղեղ էր — Կնկան մը գիտողութեանը՝
անոր պատկերին վրայ :

Թերեւս շատ գեղեցիկ երիտասարդ մըն է
Արտաշէս Յարութիւնեան . Չեմ ճանչնար ,
չգիտեմ . Բայց քանի որ կը փափաքի poser
ընել , ոտանաւորի մը մէջ , իբր վշտակիր
տղի մը , ⁽¹⁾ մնայածը ինծի չվերաբերիր .
թո՛ղ կիները երեւակային զինքը ինչպէս որ
կուզեն :

Ալֆօնս Քառի դէմ չըջարեւութեան զըր-
ուած սուտ լուրերէն մէկն ալ էր թէ շատ
աղեղ էր ան , Առանց սկզբամբ ուրանալու
իր աղեղութիւնը՝ Քառ ուզած է ճշգիւ անոր
սահմանները վաւերական պատկերով մը ,
որպէս զի ամէն մարդ չկարծէր — կըսէ —
թէ «մեղմայուցիչ պարագաներ յուսացող
յանցաւոր մըն էր» :

Բայց երբեք վրշա չգլաց իր աղեղութե-
ան , եւ կիները սիրեցին զինքը՝ գեղեցիկէ
մը աւելի , թէեւ ուրիշ կիներ ալ — անմիտ-
ները — տաեցին զինքը՝ հրէշէ մը ոչ պակաս :
Ալֆօնս Քառ , ինչպէս Վօլթէր , պաշտելին
էր խելացի կիներուն :

Արտաշէս Յարութիւնեան՝ դեռ երէկ՝ շատ
հանդիսաւոր առիթի մը մէջ , քննադատ հռ-
չակեց ինքզինքը , բարձր ձայնով . Իսկ այսօր՝
Պառնասէն վեր կը մագլցի , վիշտերով ծան-
րաբեռնուած , կիներու քով անյաջողութենէ
մը թերեւս դառնացած : Եւ ասոնց երեսին
կը պոռայ .

—Չունի արժեք ձեզի համար , ո՞վ անգուր ,
Բանաստեղծի սիրուած անունն իմ խեղճուկ ,
Բարոյական յատկութիւններ ձեզ ի՞նչ փոյթ .
Ձեր սիրոյն դէմ քերքուածներ չէք փնտռեր դուք :

Ի՞նչ սարսափելի թշնամանք . . . : Ուրեմն
պէտք է յուսահատիլ մեր գրականութենէն ,
մեր զարգացումէն , քանի որ պէտք կըլլայ
յուսահատիլ հայ կիներն , մեր ապագայ սե-
րունդներուն մայրէն , քանի որ սա դատա-
պարտուած կը մնայ բանաստեղծէ մը , —
բարեբաղդաբար ինքնակոչ — որ անոր ճակ-
տին կը դրոշմէ անջնջելի ամօթ մը , բարոյա-
կան յատկութիւններու չգոյութիւնը :

Բայց ոչինչ չչափազանցենք . շատ լուրջ
հրապարակադրի մը հետ չէ գործերնիս , կամ
լաւ եւս կը դիտենք «գրական թեթեւամտու-
թեան» մասնաւոր երեւոյթ մը — Յարու-
թիւնեանի բառերովը — առանց դեռ կարե-
նալ գուշակելու կամ ճշգիւլու՝ անոր ստանա-
լիք ապագայ «ցաւալի համեմատութիւնները» :

Բայց եթէ անբաւական մնաց Villacabran ,
— գաւառական գրականութեան հարցին մէջ —
ձեր արամադրութեանը տակ պիտի դնէի ,
եթէ «խեղճուկ» անուանած չըլլայիք ինք-
զինքնիւ , այն «բարեբար մտրակը» , այն
«վախազդեցիկ կաշին» , այն «սթափեցուցիչ
ապստակը» , այն «արթնցնող խթանը» , եւ դեռ

(1) «Վիշաբ» — Տեւ Մաւիս Թիւ 7, 16 փետրվար 1902.

ինչ որ կուզէք, որոնց այնքան շատ պէտք ունիք, հաւատացէ՛ք, Պ. Յարութիւնեան, եւ պիտի կրկնէի Մասքօթի Լօրան իշխանին հետ .

— Toutes les fois que vous en aurez besoin, elles sont à votre disposition.

Բնարութիւնը ձերն է . խարաղանը . . . եթէ կը հաճիք :

Ենթադրենք սակայն թէ Յարութիւնեան սխալեցաւ միջոցներուն վրայ, եւ փոխանակ մեղրով որսալու ճանձերը, քացախով որսայ : Սիրահարները ընդհանրապէս անճարակութեան մէջ կրկնան, մանաւանդ՝ երբ բանաստեղծի հովեր կ'առնեն :

Բայց երբե՛ք այդպէս չեղաւ Ալֆօնս Քառ, այդ տգեղ մարդը : Չեղաւ նա սիրոյ մուրացկան մը, պապուկ մը — ժողովրդական բառով —, եւ երբե՛ք չհառաչեց նայուածքի մը «տարբեր ճաճանչ»ին ետեւէն, չառաւելեցաւ ժպիտի «տարբեր ծաղիկ» մը քաղելու համար, չպաղատեցաւ երբե՛ք շնորհք մը՝ հետեւեալ տեսակէն .

— «Ձեռն, Տիկին, առատօրէն սիրուելուն . . . »

Մալկարացի բանաստեղծ—քննադատին, գաւառական ապագայ գրականութեան ակոյեանին չինած տասնըվեց տողերուն գիմայը պիտի շարեմ Ալֆօնս Քառի տասնըմէկ հետեւեալ տողերը, որոնց վերնագիրն է պարզապէս . Onze vers : Ատով պիտի ապացուցուի կրկին թէ՛ եւ ոչ իսկ յանգչինած ատենը՝ poser չընեն ճշմարիտ բանաստեղծը .

Si vous ne m'aimez pas, bornez là vos rigueurs.

— L'oiseau qui chante au bord de sa maison de mousse
Ne chante pas pour moi son idylle si douce.

Les fleurs qui dans les airs exhalent leurs odeurs,

Ne s'inquiètent pas si j'aime ou non les fleurs.

Le riche ciel d'azur, cette splendide tente,

Ne semble pas me rendre un amour mutuel.

— Eh bien! ne m'aimez pas; mais laissez-moi, méchante,

Aimer et votre souffle, et votre voix vibrante,

Comme j'aime la fleur, comme l'oiseau qui chante,

— Et le bleu de vos yeux, comme le bleu du ciel.

Փոխանակ ըսելու կրկներուն .

— Համբաւն ունիք աղւոր տըղոց տարիանքին ,

Ալֆօնս Քառ կը նմանցնէ կնոջ՝ ձայնը՝

թռչունի երգին , շունչը՝ ծաղկներու բային , եւ աչքերը՝ երկնքի կապոյտին :

Բայց մեզի համար՝ որ գրականութեան մէջ մօտաին ետեւէն կը վազենք, ինչպէ՛ս կրկները՝ գլխարկի մը ընարութեան մէջ, Ալֆօնս Քառ անչուշա հինցած է, օրուան մարդը չէ, մանաւանդ Մալկարացի մէջ՝ ուր Բարիկի վերջին նորոյթը միայն արժէք ունի :

Տեղն է սակայն կրկնելու, կատակերգութեան Աւսէսթին հետ .

— Oui, monsieur le rieur, malgré vos beaux esprits, J'estime plus cela que la pompe fleurie
De tous ces faux brillants où chacun se récrie . . .

Կեղծ աղամտնոյ մը, ահաւասիկ .

«Գիծերու չափական զիպուածաւոր դաշնակութեան մը խառնուրդը» :

Եթէ ես ըլլայի կին, պիտի գոչէի .

— Ողորմելի՛, ի՞նչ կուզես որ հասկնա՞յ այդ զիծերեղ, անոնց չարիսխան ըլլալէն կ'աչըլլալէն, կ'ամ անոնց դիպրաճաւար հեղաշնակութենէն : Ա՛յս է սիրոյ լեզուն : Չէ՛, դաշնակութենէն : Ա՛յս է սիրոյ լեզուն : Չէ՛, սիրած բնաւ կեանքիդ մէջ՝ զիտնալու համար թէ զգացումը կը հետեւի բնութեան, պարզ է ընտելութեան պէս, կը խորշի խառնուրդէ .

Եթէ ես ըլլայի կին, ուսերս պիտի թռչունի կարգաւոր հետեւեալ տողերը .

— Սըրտիս ամբողջ պաշտամունքը անպատում, Դեմքիս վրայ չը դնելու մորմոքման.
Կուրծքիս տակը խոր ցաւն ունիմ ես տրտում,
Վիշտը՝ աղւոր մը ջրլալուն վիշտն անմուն .

Որի ի՞նչ փոյթ, եթէ տգեղ ես : Զանազէթ հասկնալի ըլլալու . սրամիտ եւ հասկնալի եղիր : Կը կարծես որ այսքանը պիտի չբաւէ՞ր :

Խրատ մըն ալ, ո՛վ դեռավարժ պու՛շտ, եւ թո՛ղ վերջինը ըլլայ, քանի որ Villacabra-ն չազգեց :

Մեղադրելի չես երբ անգլոսակցութեան կ'արհամարհես — քեթերաւսութեամբ չեմքոհ համար — ինքնազարգացման գործաւորները, որոնց օրինակին դուն եւս կը ջանաս հետեւելու գովելի եռանդով, կ'անուանես մէկը «քահանայապետ», միւրը՝ «գպիր» . կը ծայրէքեցնես բառեր՝ որոնց իմաստը կամ հասկնալը չես հասկնար, նման միւսին զո՞րք կ'այպանես : Մեղադրելի չես, ո՛չ, քանի որ

չես տարբերիր այն ընդհանուր տիպարէն՝ որուն յատկացուած է առաջ բերած բացատրութիւնդ :

— «Ե՛ս, չե՛մ հասկընար, ե՛ս» :

Դատապարտելի կը մնաս, սակայն, եթէ մերժես թօթալիւ չափազանց յաւակնութիւններդ : Վարժապետ մնացի՛ր գաւառիդ անկիւնը, ուր աւելի արժէք ունին ծառայութիւններդ : Բայց՝ կօշկակար, կօշիկէն վեր մեկար :

Արուեստ մը՝ որուն մէջ վարժապետը «չանցնիր», ոտանաւոր յորինելու արուեստն է, չառ աւելի խստապահանջ՝ մնացածներէն :

Եթէ տգեղութիւնդ այնքան ահռելի է, քեզի վիշտ պատճառելու չափ, զրկուած մնալու չափ կիներուն շնորհքներէն, մի՛ յուսահատիր դարմանէն, ստացի՛ր մաքրի մշակութիւն յարատեւ ճիգով, անխռնջ աշխատութեամբ, եւ վարձատրութիւնը չուշտնար :

Իսկ եթէ վիշտդ անսահման էր եւ անհզոր, Ովկիանոսին նման, լաւագոյն եւ պատուարել էր Ռոտոսթոյէն ծովը նետուիլ, կամ Ֆէրէ-ճիքէն անցնող առաջին կառախումբին տակը, քան թէ միեթարութիւն փնտռել բանաստեղծութեան մէջ՝ ուր կորուստը անխուսափելի է, եւ արտաքին օգնութեան հաւանաւորութիւնները՝ ոչինչ :

Ո՛չ Պոլսականի խնդիր է աս, ո՛չ գաւառականի. արուեստը համաշխարհային է, կը ստացուի մշակութեամբ, եւ մի միայն մշակութեամբ, ամէն անգամ որ տաղանդը զերիխան չներկայանար :

Մինչեւ որ կատարեւապէս «հասկընաք» այս ճշմարտութիւնները, անուանեցէ՛ք զձեզ «մակարոյծ», ձեզի դէմ ուղղեցէ՛ք «բարեբար մարտիլ» ուրկէ արդէն այնքան շատ օգտուեցաք — մի՛ ուրանաք — եթէ չէք ուզեր որ ուրիշները յիշեցնեն ձեզի :

— Սարալա՛նը . . . Եթէ կը հաճիք :

Քերա, 17 Ապրիլ 1902

Դ.Բ. ՄԱՂԱՍՍ

ԳԵՐՄԱՆՔԻՆ ՔԵՐՍԱՎԱՆ Եւ զՐԱԳԱՏՐԱԿԱՆ ԸՆԲԵՐԵՂԱՐԱՆ : ԹՐԻՆԵՅ ԱՆԴՐԱՆԻԿ Լ. ԲԵՍՍԷԼԷՃԵԱՆ : Գին 2 դրուշ :

Գերմաներէն սորվիլ փափագող հայ աղոց համար պիտանի դասագիրք մըն է այս գրքոյիդ :

ԱՆԴՐԱՆԱՐՁՈՒՄ

(Ս Ի Բ Ե Դ)

Ինծի բսին. «Տե՛ս, գարուն եւ Ինչպէս որ Կը հըրճուի լոյսն երբին մեջ կապուտակ Ու հոգւոյն մեջ կ'իջնեն յոյզեր լուսաւոր, Պիտի ծագի նոր սեր մ'այնպէս կուրծքիդ տակ...»

Անկե՞ղծ էր ձայնն ու յուսատու՞,— ջնմ գիտեր Եւ անձնատուր այդ արեւոտ մըրմունջին՝ Ըսպասեցի ես անձկագին, սիրտս անտէր, Այդ երագին. . . գուցէ պատրանք մը վերջին :

Բայց ըստուերը նախկին սիրոյս՝ վերաբարձ՝ Թարմ իղձերուս, վարդ անուրջիս դաշտին մեջ Տարածուելով իբրեւ մըշուշ տըրտամած՝ Ծածկընցաւ աջքէս տեսիլքն այն անկե՛րջ :

Ու գարնային ծաղկներուն մեջ վըտիտ Սըրախ, ճին սերս աշնան տերեւ՝ մոլորուն՝ Կը բախառի աննրպատակ, անժպիտ Աւաղելով հըմայքն անդարձ օրերուն :

5 Ապրիլ 1902

Մ. ՌԻՂՈՒՐԼԵԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

ՁԱՏԿԻ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձէիք սպասեր հարկաւ, «անուշ ընթերցողներ», — չեղած ըլլալու համար յաւիտենական «սիրելի»էն, — եւ անուշուհի ընթերցուհիներս, — կ'ըլլա՞յ արդեօք, — որ, գուշակի հոգի առնէի, անցեալ շաբթուէն է, Չատիկի Նօթերուն առթիւ, արձանագրելու համար այն տպաւորութիւնները, զորս ընդհանուր կերպով ունեցան բոլոր անոնք՝ որոնք ինքզինքնին միմիայն Չատիկին նուիրեցին, չնկղելով եւ ո՛չ մէկ մանրամասնութիւնէն իսկ այն պայմաններուն, զորս քրիստոնէական մեծ աօնը կը զնէ իրենց վրայ :

Ու հիմա որ, տարւոյն ա՛յնքան սիրուած աօնը քանի մը օր ետ փախած է, չեմ յուսար թէ, այդ պատճառով, կրնաք ա՛լ մոռցած ըլլալ, այն բոլորովին հրճուալից ու սովորականէն տարբեր օրերը, անոնց առթած յուզումները, տպաւորութիւնները, — որպէսզի չուզէիք մտիկ ընել անոր վրայ խօս :

քեր, երբ անոնք կրնային այսօր միայն ըս-
ուել, եւ, մանաւանդ, երբ դեռ շատ մը հե-
ռացած չենք անկէ, հաղիւ գոնուելով նոր
կիրակիի սեմին վրայ:

Դէպի Քրիստոնեային բարեպաշտիկ զգա-
ցումները, եպիսկոպոսական անանկ սրտե-
ռանդ աւելնով մը ներշնչուած ու խանդա-
վառուած էի անցած շաբթուան գաղական
քարոզիւմ մէջ որ, աւաղ օրերուն մօտիկնա-
լուն հետ միայն զգացի թէ, նորընծայի մը
ջերմեանդական տաք սէրը կաթած էր հո-
գիւս մէջ, դէպի Ս. օրերու եկեղեցատիրու-
թիւնը, այնքան որ, անուշ ընթերցող, եկե-
ղեցականներու յորդառատ թիւին վրայ հատ
մըն ալ աւելցնելու բուռն փափաքի մը փոր-
ձութեան դիմադրուել ստիպուեցայ, չորս
հինգ օր, — ամբողջ այդ օրերուն մէջ, մո-
րուքի սեւ փունջով մը մնալու պղտիկ տու-
գանքով միայն ազատելով անկէ, ալ կը
կռահէք թէ ինչո՞ւ տառնիկ . . .

Եւ, հետեւաբար, եկեղեցական ո՛չ մէկ
արարողութեան չպակսեցայ, թէեւ աւա՞ղ, կը
կորսուէի ժամօրներու ամբոխին մէջ, իմ
աննշան, ափ մը վիճակով, ոտքի տակ եր-
թալու վտանգին ենթակայ, ամէն վայրկեան,
տեղ չսլմող, հրմշակուող հաւատացեալներու
ամբոխին մէջ:

Ե՛ս ինչ ընեմ որ «հրմշակուող» էն քակ-
ուեցաւ ծայրը Զատիկի տպաւորութիւններուն,
ամէնքն ալ, ուր որ երթաս, այնքան նման
իրարու, որքան չեն թերեւս, մէկ ճիւղի
վրայ աճող զոյգ մը խնձորներ:

Ջերմեանդութեան վրայ «ստուեր տծել»
չըլլայ, բայց թո՛ղ ներուի ինծի ըսել որ,
հակառակ բուռն մաքառումիս, ամէն անգամ
որ եկեղեցի վազեցի, անցնող նուիրական
օրերուն մէջ, ուշադրութիւնս երբեք չկրցաւ
զատուիլ արտաքին աշխարհին աղմուկէն,
— իմա՛ ուսմիկ, նիւթական աշխարհէն, պի-
տի ըսէր Դարադաշեան, — որպէսզի գոնէ
պահ մը կարենայի նուիրուիլ ջերմեանդ
զգացումներուս, եւ հանդարտ գլուխով նուիր-
ուիլ ունկնդրութեանը հոգեթով աղօթե-
րութիւններուն, շարականներու վերացնող
մեղեդիներուն, եւ ականջ տալ կարդացուած

աւետարաններուն, — եթէ սակայն կարա-
ցող երանելին միաքը զրած չըլլար չոգի-
շարժ միտցէ մը զրդուածի չափ արագ լարակ
կարգացածը, — յարգուած ունակութեան մը
համաձայն, շատ մը մարդոց համար:

Բացատրութեան պէտք ունի՞ք, հասկը-
նալու համար թէ ինչո՞ւ այս լսանք:

Հաղիւ մէկը երեսին խաչ մը հանելով
սկսած է իր աղօթքին, ա՛ռ, աղմուկ մըն է
կը բրթի, որուն մէջ են մի՛տք կ'ուզեմ որ
յաջողի յամառ մնալ իր սեւեւումանը մէջ:
Պառայի չլթան կը քակուի, ոտքեր կոխ-
կըրտելով, հրուելով, հրմշակուելով, եւ մարդ-
կային տառանդ ալիք մը առաջ բերելով մէկ
կողմէն միւսը:

— Անտես մի՛ առնէք, չեմ գիտերի՞նք
պնակն է . . .

Ամբողջ շաբթ մը պնակի տեսակներու:
— Ժամարար քահանայի պնակ, աղքատի
պնակ, վարժարանի պնակ, շապիկ չինուող
պնակ, պնակ, պնակ, պնակ, պնակ . . . անհա-
նում, անծայր:

Ու տակաւին այդ չլթան չլմեցած, ու-
րիշ մը:

— Անտես մի՛ առնէք, . . . ին պնակն է . . .

Ան ալ կ'երթայ, ուրիշ մը:

— . . . ին պնակն է, անտես մի՛ առնէք:

Պնակներու եւ «անտես, մի՛ առնէք» ներքո
յաւիտենական յանկերգ մը, դրամի գոռացող
շառաչումին միացած, որ աղօթքի տաճար
կը դարձնէ սեղանաւորական «պոռոս» մը:

Ու հոն, թեթեւ ակնարկ մը պտտցնելով,
չեմ գտնել մէկը, ամբողջ խուռներամ բազ-
մութեան մէջ մէկ հոգի մը, բացարձակապէս
որ հոգեվին զբաղած ըլլայ իր աղօթքով,
հանդարտ, անվրդով: Ժամօրները, ամէնքն
ալ, զբաղած են սեղանաւորութիւնով մը, —
զրամ-կ'առնեն, զրամ կուտան, քաւորդ կա-
րեն, մանրուք կը շինեն, շարունակ, անդա-
րում, յաւիտենապէս: Ու իրերու այս ակառ-
հակադարձութեանը մէջ, ցաւով կը մատնել
թէ, ինչո՞ւ եկած են սա մարդիկ եկեղեցի,
երբ իրենց գործը մինչեւ ետքը լուծալով
խաթիւն պիտի ըլլար հոն, — թերեւս
կառակ ալ իրենց կամքին, — արդեօք

բայց ունեցողն ազուտոր ձա՞յնը մտիկ ընելու համար : Կը մտածեմ նաեւ թէ , ի՞նչ պիտի ըլլար լնաւ եկեղեցիի երես չտեսնող մէկուն ազաւորութիւնը , երբ մէկէն ի մէկ հոն բերուէր : Ի՞նչ անուն մը պիտի դնէր արդեօք անոր :

Մեր պինդ-ղուխ յամառութիւնը հասկնալու էր վերջապէս թէ , առճարը սեղանաւորութեան ժամադրաւայր չէ՛ , այլ ազօթքի : Մինչդեռ , այս պարագաներուն մէջ , առանց այլեւայլի , ան կը դադրի կոր ազօթաւայր մը ըլլալէ : Նոր կրկնութիւն մը ըրած ըլլալու վտիւր եթէ չունենայի , պիտի հարցնէի մեր ա՛յնքան հոգատար զրամահաւաքներուն թէ , ի՞նչ կը նշանակեն պնակնեւրու այդ յաւիտենական շարքերը , եկեղեցիին հիմնադիրը , Քրիստոս , իրենց աստանկ ընէն չպատուիրեց : Պիտի պատասխանեն առնոք ինծի թէ , աղքատներ ունին , ժամաւոր աշխատէր ունին , ժամկոչ ունին , շապիկ չիմուող տիրացու ունին , ի՞նչ ընեն : Ի՞նչ կուզեն թող ընեն , զանոնք կշտացնելու համար , բայց , ո՛ւհ , ատ պնակները չեն քաշուիր : Նոյն իսկ քրիստոնէութեան նշանակութիւնը ստորնացնել է , սեղանաւորական ընթացք մը ըմանալը տաճարին մէջ , ուր փոխարէն զրամի խշրտութիւն ու պնակ չըջադնցնող հոգածուններու հրմշտութիւններուն , լուսութիւնը , խորհրդաւորութիւնը՝ պէտք է տիրէր : Բայց կըղգամ , անապատին մէջ չոր քարոզներ են ասոնք , որոնք սահող հովիւուն հետ կ'անցնին կ'երթան , ու չըմանէ չըման , պնակները կուգան իրենց շարքը պտտցնել , անհատնում , անվերջ , յաւիտենական շարքը :

Է՛հ , ի՞նչ ընել :

* * *

Անտանիլի պնակներուն անմիջապէս քովը դուռելիք բան մըն ալ որ կայ , ժամ երթալու այն գիթալիօրէն տղայական ու ծիծաղելի ըմբռնումն է , որով ընդհանրապէս սոգորուած է քիչ մը ամէն մարդ մեր մէջ : Ամէն բանէ առաջ պէտք չէ մոռնալ որ , ժամ երթալուն մէջ այնչափ տեսակ նպատակ կայ , — պէտք է կրկնել , մեր մէջ , — որչափ որ կայ ժամ երթող , հակառակ քրիստոնէական

անխախտ սկզբունքին , որ ժամ երթալուն մէջ մէկ նպատակ մը միայն կը փնտռէ , ազօթելը , իր երկրաւոր մեղքերուն քաւութեանը համար , — եթէ ունի երանելի ժամաւորը , — եւ աւելի բարձր հայեցակէտ մը , իր հոգին պատրաստել անդրաշխարհի կեանքին երանաւտութիւններուն : Բայց , միտալին դէշ կողմը ա՛ն է որ , ասոր բոլորովին հակառակը տեղի կունենայ : Երեւակայել որ , ժամուն դուռը անգամ մտացողներ , Զատիկի օրը ինքզինքնին եկեղեցին կը գաննեն անգամ մը , — ալ գիտէի՞ք արդեօք թէ ի՞նչ պզտիկ հաշիւներէ դրդուած : Ասոնցմէ՛ ժամ երթալով՝ որը իր նոր զգեստը ցուցադրելը ունի իրեն նպատակ , որը ուրիշ բան մը , եւ ուրիշ մը՝ ա՛լ աւելի տարբեր բան մը : Ասիկա ասանկ ընդունելէ ետքը , — հակառակ անոր՝ ձեր բարեպաշտական զգացումները քիչ մը վերաւորող ըլլալուն , — ա՛լ չհատաղիք չէք ընել անշուշտ , երբ չարամիտներ ձեզի ըսեն թէ , մեր համեստաշուք օրիորդները իրենց ձեռքի ազօթադիրքին հետեւելէ աւելի , — ուր իրենց կուսական պզտիկ մեղքերուն քաւութիւնը կը փնտռեն երբեմն , — կը հետեւին կօշիկի ու զգեստի մեծ փրփրփրփրով ներս մանող շիք պարօններու ակնարկներուն ու շարժումներուն , եւ փոխադարձաբար : Որովհետեւ , շխտկը , դիտողի մը աչքին , ատկէ տարբեր ընթացք մը չէ՛ որ պիտի զարնէ : Է՛հ , ո՛վ գիտէ , թերեւս անոնք սուրբ գործերը սուրբ տեղերու մէջ կատարելու սկզբունքը առաջ կը տանին : Ասոր ասանկ ըլլալուն ձեզի հա ըսել տալէ ետքը , չեմ գիտեր թէ ալ թերեհաւատի կատկածութիւններ մը կ'ունենա՞ք , երբ ջանամ հաւտացնել թէ , այդ համեստաշուք օրիորդներուն ազնիւ տիրին մայրիկները , աւելի իրենց աղջնակներուն սիրտը շինելու համար է որ , ժամ կը վաղեն խուռներամ , ուր երբեմն տաքը տաքին աղու եւ աղջկան առուտուրներ ալ կ'ունենան :

— Տիկին , կը ներէք , քովի ընտանիքնիք կը ճանչնա՞ք :

— Այո՛ , ի՞նչ կար որ . . .

— Հարցուցի . . . անոր համար որ . . . կուզէի գիտնալ թէ . . . ո՛վ կըսուին . . .

աղջիկներն . . . նշանուած է . . . շատ հա-
նեցայ իրեն . . . նշանակիք աղայ ունիմ, ա-
տոր համար կը հարցնեմ կոր . . . բայց կը նե-
րէք . . .

Ապրանքի գնահատում մը, ճիշդ անոր
պէս, ինչպէս մարդ կ'ունենայ զոր օրինակ, իր
դրացիէն գորդ մը առած ատեն :

Բայց հաւատացէք որ այդ առատուրը հա-
րիւրին հարիւր կը յաջողի, ու համեստաշուք
օրիորդին աիկին մայրիկը չի զղջար ժամ եկած
ըլլալուն, օրինակ հանդիսանալով որ, ուրիշ-
ներ ալ փորձեն ապրանք ծախելու նոյն չափա-
տակութիւնը :

Եկեղեցիի չըջանակէն դուրս, հաւատացէք
որ Զատիկը նոյնքան անհամ է, ընտանեկան
չըջանաներուն մէջ ալ, ուր կարգ մը խենդ
սովորութիւններու անփոփոխ միօրինակու-
թիւնը կը տիրէ, անփոփոխ՝ որչափ են օրի-
նակի համար ծովուն ու երկինքին գոյները :

Նախ այցելութեան պայմանադրական ա-
րարողութիւնները կան, որոնց հանդիսաւորէն
կարենալ առկալու համար, մարդ պէտք է Յոր
նահապետին համբերութիւնը ունենայ :

Այցելութեան մը միջոցին, նստած չնստած.

— Ինչպէ՞ս էք, աղէկ էք: Օգը աղուոր է,
օգը գէշ է :

Անվերջանալի՝ «ինչպէս էք»ներ եւ օղի
նկարագրութիւններ : Ու եթէ բազմէք գա-
ցած տեղդ բազմութիւնը քիչ մը շատ եղա՞ւ,
կամ արեւը ամպերուն հետ երկնային քամ-
հաճոյքներ մը ունեցա՞ւ, ա՛յ գործ ունի այցե-
լուն, Հարիւրաւոր «ինչպէս էք»ներ, «բարի
եկաք»ներ, «կը ներկայացնեմ»ներ : Ու բո-
լոր ասոնց անբաժան հետեւորդը, օլն ալ,
փոխն ի փոխ գէշ կամ աղէկ կըլլայ, արեւուն
գէմ ամպի կտորի մը ներկայութիւնովը կամ
չգոյութիւնովը, — մեր բոլոր պզտիկ փոփո-
խամութիւններուն պէս :

Տակաւին հաղիւ լմցած այս «հայր-մեր»-
արարողութիւնը, քոնեա՞ք :

Արդէն զինով ես, բայց ճար չի կայ, պիտի
առնես քաղաքավարութեան դէմ մեղանշած
չըլլալու համար :

Գլուխդ աստիճան մըն ալ թմբեցուցած
ալքովն շողիովը, դուրս կ'իյնաս դուռնէն,
ուրիշ առնի մը դուռը ափ առնելու, ան-
դառնալի պարտաւորութեան մը տակ :

Հո՛ն ալ նոյն բաները, չորս կողմէն նոյն
հարցումները, որոնց պէտք է պատասխան
հասցնել, մինակ-դուլս, կէս-գինով :

— Բարի եկաք, ինչպէս էք, տիկին մայ-
րերնիդ ինչպէս է, օրիորդ քոյրերնիդ ինչ-
պէս է, պարոն եղբայրնիդ ինչպէս է,
հայրիկնիդ ինչպէս է, օգը աղուոր է, օգը
գէշ է, ո՛ւր գացիք, ո՛ւր չգացիք . . .

Տաժանելի քննութիւն մը, որ քրտինքնեղ
կ'իջեցնէ ճակատիդ, նեղութիւն կը բերէ վրայ

Հոնկէ ալ կը փախչիս. ուրիշ տեղ մը
Նորէ՛ն նոյն բանը, անփոփոխ, միօրինակ,
գոց ըրածի պէս, իրարու ետեւէ, մինչեւ որ
դուռին չեմք գտնես : — Պարապ, անզուտ
խօսքեր շատ մը, ու քօնեա՞ք :

Գիտեմ թէ մերկները լեզունին կերտ
են ու այդ չորս կտոր խօսքէն զատ բան չըզ-
խիր իրենցմէ, բայց կը բարկանամ չգիտե-
լուս համար թէ, ո՞վ է հնարեր սա գոն-
եաքը, որ զփնեւտելի խրտուելակի մը պէս կը
կանգնի գէմը, ձեւ ձեւ դաւաթներու մէջ,
ուր որ երթաս, անպատճառ, անպատճառ
կը հասկնաք թէ քոնեաքին հետ սիրալիք
անցեալ մը ունեցած ըլլալուս համար չէ՞ որ
այսքան բուռն ատելութիւնով մը կը վերա-
բերուիմ անոր հանդէպ, հասլա սա պատճառ-
ոին համար միշտակ որ, անիկա կը յատկանէ
մեր կոյր սովորամոլութիւնը ու անպատճառ
զիրար ընդօրինակելու անիմաստ մարմնը :
Ինչո՞ւ, չորս հոգի ալ, չեն կրնար չեղում մը
ընել անկէ ու հրամցնել, ինչ գիտեմ, ուրիշ
բան մը, . . . կարմիր հաւկիթ (?) օրինակի
համար, — եթէ չհաւնելիք չէք ընել զիւսին :

Տակաւին այս նորասիրութիւնէն զատ,
Քրիստոս ալ, ապահովաբար, չպիտի ուզէր
որ, իրեն հաւատացեալները, իր յարութեան
հաշակման պատրուակով, Նոյ նահապետի
մեղքին մէջ իյնային, սա տարբերութիւնով
որ, մինչդեռ անիկա արեւին մէջ պառկելով
քաւեց իր մեղքը, միւսները դատապարտուած
են դետիները համբուրելով քաւելու, —
կը հասկնաք թէ ինչ տեսակ համբուրելով,
եւ կալիլէսէ՛ն աղէկ զգալու թէ, աշխարհ
կը դառնայ, իրենց ռաքերուն տակ . . .

ՍԳԻԼԼԻՍ

Գ. Ե. — Պ. Արտ. Յարութիւնեան, ատենէ
մը ի վեր «նորահաս գրողներուն» — ա՛լ զբիւ-

վարպետ է եղած ինք հիմա — օգտին համար, անոնց զլիւռն կարգացած իր քարոզներուն եւ ի գործ դրած խրատատուի իր բուռն ճիւղերուն իբր յաւելուած, ճարպիկ աւլողի զեր մը ստանձնած ինքնիրեն, քիչ մըն ալ Ռէմի աը կուռմոն կարգացած ըլլալուն — աս ինչ չեղած բաներ — ցուցադրութեանը անդիմադրելի բազմանքով, «գրական թեթեամտութիւններ» ձաղկելու առթիւ, ուղած էր այդ տեսակ անուն մը պատշաճեցնել, քանի մը չաքաթ առաջ Ազգ. Հիւանդանոցի Նուագահանդէսին հասին գրուած Նօթերուն, բարկահայթ կերպով սրամտելով, Ռիւպէնթայնի, Մօցարդի, Լիսթի, Մասքանիի պէս հեղինակներու գլուխ-գործոցները հեգնուած (??) տեսնելուն, որոնց ինք կուշա ու կուռ հասկըցող մըն է եղեր, եւ ուրիշներ չհասկցող:

Հասկցողութեան եւ գառնելու յաւաքի մարտնչի մը առջեւ, պէտքը կը զգամ ըսելութեւ, երաժշտութեան այդ հսկայ վարպետներուն տաղանդը փառաւորութեամբ համար, պէտքը չի կար գեղացիի մը ձախիկ ծափահարութեանը, որ աւելի աղէկ կրնար յարմարիլ դափին ու թմբուկին, եւ կանանչ վարտիքի տրորումներով խաղացուած կայթապարիւս եղանակին, քան Լիսթի, Մօցարդի, Ռիւպէնթայնի պէս վիթխարի հանճարներու ստեղծագործած եղանակի նուրբ ոլորտներուն:

Որովհետեւ, յաւով կը տեսնեմ որ, թեթեամտութիւններու ձաղկող վարպետներ, չորս կտոր զիրքի ընթերցման առթած մանկական հրճուանքներու գինովութիւններուն տակ, «իր ետեւէն սիրամարդի փետուրներէ հողմահար մը բուռնելէն» փքանալով, անուրակելի թեթեամտութիւններու մէջ կ'իյնայ, տղայաբար ու հեւ ի հեւ իրար անցնելովը ըստաճի մէջ չեւ չեւ առթիւ, զոր իր անարկու «ձանրամտութիւնովը», թեթեամտութիւններու փոթկոտ ձաղկիչը, չէ՛ կրցած հասկընալ:

Ո՛վ հսկայական ծանրամտութիւն:
Այլ հիմա, կարգը իրեն կու գայ, չհասկնալու այս առիթին մէջ, «իր անխառնութիւնէն հպարտ», ըսելու, «Ե՛ս, չե՛մ հասկնար ես»:
Ու այն ատեն, զիւրին է դուշակելը թէ, դերերը կը փոխուին:
Գէ՛շ վարպետն:

ՀԵԳԵԼՈՒԹԻՒՆՍ

ԱՌ Լ... Զ...

Սա մեր շուրջի մարդիկը բիրտ, անբզայ, Լայն միջոց մը բերին դրին մեջտեղնիս, եւ կարօտ մը սրտակեղիք ու հրակայ Հիւսս սաստիկ պրկումներով կայրէ գիս:

Բայց մինչ աշխարհ սերըս մարել կը կարծէ Ան՝ բոցավառ, հրդեհին պէս տարածուն, Զոր փոքորիկն ան աւելի կ'արծարծէ կը բորբոքի նոր եռանդով մը անհուն:

Եւ կարօտիս մորմոքալից բոցին տակ, Հեգնութիւն մը կը գտնեմ ես վերխարի, Երբ պըրստեմ հոգւոյս ծալքերն անյատակ:

Հեգնութիւն մը զոր կը նետեմ պժգանքով Երեսն ի վեր ամբողջութեան աշխարհի, եւ կը փարիմ մեր կոյս սիրոյն հոգեթով:

Ա.

Սուրհանդակ՝ շատոնց ի վեր գժառած Արտաշէս Յարութիւնեանին հետ, եւ Մադիկին անուռն ալ բերանը առնելէ զգուշացող՝ երկուքին մէկանց կը փարի յանկարծ, բան մը կարենալ ըսելու համար Մաւիսին դէմ, որ ուրախ կը զգայ ինքզինքը այս եղբայրակցութիւնը գրգռած ըլլալուն համար անուղղապէս Միայն թէ, մեր պաշտօնակիցը թո՛ղ նեւրէ մեղի որ «Յուշեր ու փուշեր» ու յօդուածագրին հետ վէճի բռնուելու չի զիջանինք: Այդ պարտը, Պէրպէրեան է ֆէնտի քանի մը սողերը արտատպած պահուն, յիշելու էր որ, զէթ իրեն եւ իրենպէսներուն համար, արդի Մաւիսին մէջ ալ զիւրին չեղաւ ստանալ մուտքի եւ քաղաքացիութեան իրաւունքը, եւ իր առաջին ու վերջին յօդուածը — «առաջին հրատարակութեան պատմութիւնը» — քանի մը օր Մաւիսի դարակներուն մէջ մընալէ ետքը, քաղաքավարութեամբ ետ դարձուեցաւ իրեն: Մնաց որ Պէրպէրեան է ֆէնտի՝ այն անկողնակալութեամբ ու ձեռնհասութեամբ որ զինքը կը յատկանիշեն, հին Մաւիսներու մասին իր դնահատումը յայտնելէ ետքը, չէր մոռցած բարկացակամ ուշադրութիւն մը դարձնել նաեւ այսօրուան Մաւիսին, գրելով:

«Իւթիւճեան է ֆէնտիին ստեղծած թերթը «ո՛չ միայն միայ միշտ կարող ձեռքերու մէջ,

Ա.

«եռանդատ գրական գործիչներու — ինչպէս
«տակաւին այսօր ալ — ձեռնհաս առաջնոր-
«դութեան տակ, փայլուն գործիք մը ար-
«ուեստի ու գրականութեան մշակման, իմա-
«ցական» բարոյական ու կրթական յառաջդի-
«մութեան, այլ . . .» եւ այլն :

Համեմատութեան գէմ էր շեշտել այս տո-
ղերը, որոնք չենք քաշուիր ըսելու՝ կը հա-
մապատասխանեն Մալխիւնի գտած ընդունե-
լութեանը, բայց գրչի այն աճարարութիւն-
ներուն մէջանգ որոնք անգի կունենան նո-
րէն, այս միջոցիս, կարգ մը թերթերու մէջ,
ճղճիմ հաշիւներու հետեւանքով եւ նախան-
ձոտ հոգիներու թելադրութեամբ, լաւագոյն
կը սեպենք վայրկեանի մը համար յաւակնոտ
նկատուի՝ այդ թերթերուն եւ անոնց առաջ
քշած յօդուածագիրներուն երեսին տալու հա-
մար մեր արհամարհանքը :

Լրագրութեան մէջ հինցած իսաղեր են
ասոնք, — նոր հրապարակագիրներու համար
թերեւս հաճելի — եւ զիրար վարկազուրկ
ընելու նպատակով եղած հրատարակութիւն-
ներէն չէ որ ժողովուրդը կը դատէ այս կամ
այն թերթին առաւելութիւնը ուրիշներու
վրայ : Սուրհանդակի խմբագրութիւնը, որ
այնքան լաւ զիտէ վիճաբանութենէ խոյս
տալու եղանակը, Հաղարարականի մը բեր-
նով եւ անոր ետին ապաստանելով չէ որ
պիտի կրնայ կարծիք մը յայտնած ըլլալ Մա-
լխիւնի նկատմամբ, ո՛չ ալ Ծաղիկէն քանի
մը կտոր-բրդուճ խօսքեր փոխ առնելով ու
իրարու քով շարելով : Արտաշէս Յարութիւն.
եանին հաշիւը մաքրած են այսօր Գր. Մալ-
խա՝ իր կտորի գրիչովը, եւ Սղէլա՝ իր
սրամիտ «յետ-գրութեամբ»ը : Զի հասկը-
ցանք թէ Սուրհանդակ ի՞նչ գործ ունի այս
գրական բանակութիւններուն մէջ որոնց այնքան
կը հասնի իր խելքը՝ որքան երկաթագործ մը
ոսկեքշտութենէ կը հասկնայ կամ աստղձա-
գործ մը՝ քանդակագործութենէ : Լաւագոյն
կընէր ինքը «կարաւանին չի խառնուելով»
— ինչպէս կըսեն ռամկօրէն :

Տ. Ա.

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Զատիկի տօնին շնորհաւորութիւնները կա-
տարուեցան երկուշաբթի Ազգ. Պատրիարքա-
րանի մէջ, հանդիսաւոր կերպով։ Ազգ. Վար-
չութեան կողմէ բանախօսեց Տիգրան էֆ. Սու-
սուֆեան սրուն պատասխանեց Ս. Պատրիարք
Հայրը՝ տեսութիւն մը ընելով աղգային գոր-
ծերուն վրայ : Երկու բանախօսութիւններն ալ
աւարտեցան բարեմալթութիւններով՝ Վեհ.
Սուլթանին արեւշատութեանը համար ներ-
կաները, եկեղեցական եւ աշխարհական, իրենց
շնորհաւորութիւնները մատուցանելէ ետքը Ս.
Պատրիարք Հօր, Երուսաղէմատուն երթալով
շնորհաւորական այցելութիւն տուին նաեւ Ն.
րուսաղէմի Պատր. Փոխանորդ Տ. Երէցեան
Սրբազանին :

Զատիկի երկու օրերը Ս. Պատրիարքը ըն-
դունեց շնորհաւորական այցելութիւնները
Պարսից զեսպանին եւ միւս զեսպանատանց
թարգմաններուն, Հայ Հռոմէականաց Ս.
Պատրիարքին, Պուլկարաց Ս. Էկզարքին,
ինչպէս նաեւ այցաքարտերը նախարարներու
եւ ուրիշ պաշտօնական անձնաւորութեանց :
Երեքշաբթի, Ն. Ամենապատուութիւնը այցե-
լեց Յունաց եւ Հայ Հռոմէականաց Պատրի-
արքներուն եւ Պուլկարաց Էկզարքին, եւ
սիրալիբ ընդունելութեամբ մեծարուեցաւ :

Կայս. գնահատում. — Վեհ. Սուլթանը
բարեհաճեցաւ առաջին կարգի Մէճիթիյէ պատ-
ուանշան շնորհել Ասեւարական Ընդհանուր
Տնօրէնի օգնական Ռօպէր էֆ. Եազըճեանի ի
վարձ իր բարւոք ծառայութեանց :

Ս. Հայրապետը վերջերս սկսած է գրական
երկատիրութիւններով պարապիլ : Ն. Ս. Օձու-
թիւնը գրած է արդէն Զանչեանցի յիշատակին
նուիրուած գրութիւն մը ուր ներդրուած է
հանգուցեալին յիշատակը : Նոյնպէս երկվե-
րանական գրուածք մը յօրինած է, ինչպէս
կը կարդանք Արեւելքի մէջ :

Պեպեքի Որբանոցին մէջ դանուոյ 35ի
չափ երկսեռ հայ որբեր, իրենց ուսուցչու հիին
առաջնորդութեամբ, Զատիկի երկուշաբթին
Գուրուչէշմէի եկեղեցին երթալով՝ ներկայ
գանուեցան պատարագին եւ հաղորդուեցան :

ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆ ՈՒՅԻՒՆ

ՆԵՐՈՒՆԱ

Վ. Է. Պ. ԲՍ. ՈՒՆ. Հ. Ս. ՅԶԷԻ

Թիւ 4

Լէօնարտի ընկողմանած էր պատշգամբին վրայ : Հաստատ գիտէր թէ ձայնը դէմի տան պզտիկ պատուհանէն կուգար : այս պատուհանը իրենինէն քիչ մը աւելի ցած էր : Հիմա լոյս կը տեսնուէր հոն , կաւէ պզտիկ լամբարի մը տկար ու կարմիր նշոյլը : Բաւականաչափ լոյս կուտար սակայն , որպէս զի կոմսը կարենար տեսնել իր մանկամարդ զրացունին , որ իր երկար մազերը կը սանտրէր ու կը հիւսէր զրպանի պզտիկ հայելիի մը առջեւ : Ան իր պզտիկ անկողնակալին միւս կողմը դարձած էր . ծայրը միայն կը տեսնուէր : պատուհանին մօտիկը կը նշմարուէր ֆարհալը , ինչպէս նաեւ մութ կարմիր ծաղիկներով լեցուն աման մը :

— Ներինա' , կանչեց ձայնով մը որուն հնչւնդ յստակ չէր :

Իբր ճշմարիտ դուստր Եւայի , չլսել ձեւացուց աղջիկը , շարունակելով հայելին նայել ու մազերը յարդարել : Յետոյ վերսկսաւ իր երգը :

— Ներինա' , կանչեց բանաստեղծը աւելի բարձր ձայնով , այնչափ բարձր որ ալ անհրնար էր անուշադրութիւն կեղծել : — Այն ատեն ծաղկահոսակ աղջիկը ետին դարձաւ , հապճեպով մազերուն մէջ խրեց վերջին դարձանդները եւ պատուհանին առջեւ եկաւ :

— Տակաւին արթուն էք , Պարոն ձիաքօն :

— Ո'հ , ես ճշմարիտ բու մըն եմ , հագուողէպ է որ կէս գիշերէն առաջ կարենամ քնանալ : Բայց դո՞ւն , դո՞ւն ալ այսպէս ուշ կը պառկիս . բարեկամուհիի կամ բարեկամի մը հետ պատեղու չդացիր :

— Բարեկամ . ես բնաւ բարեկամ չունիմ , ու մայրս թոյլ չիտար որ գիշեր ատեն փողոց

կլլեմ : Սակայն այնչափ դո՛հ էի որ պառկելու գաղափարը չունէի : Երկար ատեն վաւարանին քովը նստած մնացի , ածուխները փչելով զբաղեցայ , եւ կը դուարճանայի կայծերուն ճարճատիւն ու ցտկելը գիտելով : Վերջապէս մայրս սենեակս զրկեց զիս . սակայն Աստուած միայն գիտէ թէ ե'րբ պիտի քնանամ : Լուսինը ա'յնչափ գեղեցիկ ու պայծառ է , եւ այն բոլոր երգերը զորս լսելի , ուրախ կամ տխուր կ'ընդունին ինծի , սակայն անոնց տիրազդեցիկներն անգամ չեն տխրեցրներ զիս : Զեր վրայ ալ , Պ. ձիաքօն , նոյն ապաւորութիւնը չե'ն ըներ :

— Սիրելի Ներինաս , պատասխանեց . լուսնկան ինծի արգելք եղաւ քնանալու : Զիս արթուն տեսողը պիտի կարծէր թէ քեզի բարի գիշեր մաղթելու համար սպասեցի : Դժբախտաբար քեզի նետելիք բան մը չունիմ , ոչ պտուղ , ոչ շաքար , ինչպէս ուրիշ անգամներ :

— Ո'հ , ես այդպիսի բաներ չեմ ուզեր : դուք ուրիշ բան մը ունիք սակայն որ ինծի պէս տխուր պզտիկ արարածի մը համար թերեւս աւելի թանկագին պիտի ըլլար :

— Ի՞նչ ըսել կ'ուզես :

— Եթէ հաճէիք ինծի կրկնել այն սուգը , զորս այսօր բլուրին վրայ յօրինեցիք ու ձեր յուշատետրին մէջ գրեցիք : Գուցէ զիս շատ անկիրթ համարիք ձեզի խնդրանք մը ընկրուս համար :

— Ո'հ , աղջիկս , ըսաւ բանաստեղծը ժպտելով . դուն քաղքին մէջ մեծ տիկին մը կրնաս ըլլալ , եւ այս մասին յաջողելու գաղտնիքները շատ լաւ գիտես : Ասկէ դատ , դուն չե'ս իմ միակ ունկնդիրս քսան մզոնոց չըջանակի մը մէջ : Կեցի'ր , հիմա պիտի ըսեմ քեզի այդ սուգերը :

Անմիջապէս սենեակին մէջ անհրեւութա-
ցաւ , յուշատետրը փնտռեց , անոր մէջէն գե-
ղեցիկ ու ճերմակ թերթ մը առաւ եւ վրան
խոշոր ու մաքուր գրերով քերթուածը ընդո-
րինակեց . յետոյ ետ դարձաւ , եկաւ կռթը-
նեցաւ պատշգամբին վրայ : Նորաթի աղջկը
իր անզը չէր փութած : Այն միջոցին երբ ան
ոտանաւորները ծանր ծանր կ'արատասանէր
իր խորունկ , թեթեւօրէն քողածածուկ ձայ-
նովը , տեսաւ որ աղջիկը աչքերը կը դոցէր
ու երջանկութենէն գրեթէ այլակերպուած
դէմքը դարձած էր գէպի լուսինը :

Երբ լնացուց , կոմսը լսեց որ Ներինա ցած
ձայնով կը կրկնէր սա տողը .

Ու քաղցր ե ինձի նաւաքեկիչ այս ծովուն
մեջ :

— Հիմա՞ , հարցուց կատակախառն չեչտով
մը : Հապա գնահատու՞մը : Պէտք է որ փոք-
րիկ ունկնիկդս ըսէ ինձի թէ , կը հասկնա՞յ
ինչ որ արտայայտուլ ուղեցի , ինձի ներքող-
նե՞ր ունի ուղղելիք թէ կշտամբանքնիր :

Վայրկեան մը լուռ մնաց աղջիկը , յետոյ
յանկարծ .

— Պարոն ճիւղքոմօ , կը հաճէի՞ք ինձի
հասցնել այդ թերթը : Անշուշտ հեշտիւ պիտի
ըմբռնեմ ձեր դրածները . սակայն կը փափա-
քիմ ատեն ատեն նորէն կարդալ ու զանոնք
աչքի տըջեւ ունենալ , խորհելու համար ձեր
վրայ , ձեր խօսած սիրալիր ու բարի բոլոր
խօսքերուն վրայ :

— Շատ սիրով , պատասխանեց կոմսը .
կրկին անգամ ընդօրինակեցի յատկապէս քեզի
համար : Հիմա պիտի ծալլեմ քեզի զրկեմ
զանոնք :

Իր գրասեղանին վրայ նամակի պահարան
մը փնտռած պահուն , ձեռքին տակ դտաւ իր
քերթուածներէն մէկ օրինակ : Գրած թու զթը
մէջը դրաւ , եւ պլորկէ ետքը՝ Ժապաւէնի
կտորով մը կապեց զայն :

— Բռնէ՛ , ըսաւ կոմսը ծրարը անոր նե-
տեղով :

Ներինա պատուհանէն դուրս երկնցուց
ձեռքը : Ծրարը հասնելու վրայ էր արդէն ,
եւ ահա սիրուն ձեռքը ճարտարութեամբ բըռ-
նեց զայն օդին մէջէն :

— Սպասեցէ՛ք քիչ մը , գոչեց նշանացի

չնորհակալութիւն յայտնելով : Պէտք է որ
գուք ալ պարտաւ չդառնաք :

Ներինա փութաց քաղել ծաղկամանին
պարունակած բոլոր ծաղիկները , եւ պատու-
հանին ծնօտէն դամէ մը կախուած մկրտա-
տանելով , մէկ բոպէի մէջ կտրեց իր սեւ մազե-
րէն երկար ու նուրբ խուրձ մը , որով ծաղիկ
փունջը կապեց եւ կատակով մը անոր նե-
տեց , այնպէս որ բանաստեղծը ուրախ դէմքով
ընդունեց զայն : Կոմսը գեռ կը լսէր անոր
ձայնը որ կ'ըսէր . « Գիշեր բարի , գիշեր բա-
րի » : Երբ փունջը ստացաւ եւ ոտքի կ'ա-
նոր իր չնորհակալիքը յայտնելու համար ,
դէմի սենեակը արդէն մթնցած ու պլակի
պատուհանը դոցուած էր :

Դ.

Կոմսը հագլւ քանի մը վայրկեան քնացաւ
այն գիշերը : Զինքը արթուն կը պահէր ու
միայն լուսնկային շողը որ իր սենեակին
տախտակամանին վրայ կը շրջէր , այլ նաեւ
այն սեւ աչքերուն փայլը : Կը շարունակէր
տեսնել զանոնք , կը լսէր տակաւին այն լըս-
տակ , մեղամաղձիկ ձայնը , որուն երգն ու
ծիծաղը իր սրտին մէջ խառնաչփոթ խառնու-
թիւն մը առաջ բերած էին :

« Այսպէս կըլլայ նաեւ մարդուն համար ,
երբ գտած է սէրը . անկաշկանդ ըլլալ կը
կարծէ , մինչդեռ չլթայուած է » :

Այնպէս կը թուէր իրեն թէ անընդհատ կը
լսէր այս բառերուն իր առջեւ կրկնուիլը :
Ոտքի ելաւ . մահճակալին ձեղունը դադար
կախարիչի մը չափ կը ճնշէր զինքը . բացա-
պատշգամբին երկփեղկ զուռը եւ թողուց որ
գիշերուան սառուցիկ օդը զովացնէ իր հրա-
տոչոր կտրածքը : Ոյժի ու երիտասարդութեան
զգայութիւնով մը , որ երկար ատենէ ի վեր
անձանօթ էր իրեն , համակուեցաւ իր բո-
վանդակէն ետեւիւնը :

— Ուրիշ՞ կուգայ այս փոփոխութիւնը ,
ըսաւ ինքնիրեն , երբ վանդակապատի ձողիկ
նեւրուն մէջէն իր ակնարկը կ'ուղղուէր դէպ
պզտիկ պատուհանը՝ որ ստորին մակարդակ
մը վրայ հաստատուած էր : Միտքէն կ'ըսէր
նաեւ . « Արդեօք անցածը ընդ միշտ անցած
պիտի ըլլայ , Աստուած իմ . եթէ այդպէս » :

ըլլար . . . Ո՛հ, ո՛ւր էր թէ երջանկութեան կաթիլ մը կարենար բոցակէջ շրթունքներս գովացնել, միակ կաթիլ մը, բաժակէն քաղուած երկար, անյաղ ուժով մը : Եւ ինչո՞ւ համար անկարելի պիտի ըլլար : Այս ունայնութեան աշխարհին մէջ . բայց հոս երկրի վրայ կրնամ սպասել միայն ամուլ ու կանխաճառ մահուան մը, որ կեանքը ճանչնալէս առաջ պիտի տանի զիս : Ո՛ւր էր թէ այսպիսի կեանքի մը փոխան, կարենայի յուսալ հանդիսաւ ընակութիւն մը գտնել անդ մը, աւելի նպաստաւոր երկինքի մը տակ, հոգիի մը հետ՝ որ զիս հասկնար, զիս սիրէր, ու բնաւ այսպէս չվարուէր պարզ կարեկցութիւնով մը : Այլքաաւ եւ անտարակոյս եւ ալքաաւ ալ պիտի մնամ միշտ . բայց ան ալ բնաւ չէ՞ վարժուած աղքատութեան, երախտաւորտ պէտք չէ՞ ըլլամ բախտին հանդէպ որ բնաւ դանձեր չէ շտայլած ինծի, եւ այնպէս ըրած է որ այսպէս ազատ մնամ համաստիճան մէկը ինծի իբր ընկերուէի տալով : Լաւագոյն չէ՞ որ հարուստ նկատեմ ինքզինքս դուրս հանգչեցնելով բնութեան եւ ամուսնիս ինծի պարգեւած բարիքներուն վրայ :» Դարձեալ անկողնին վրայ նստուեցաւ . արեւը տեղագիրն կը խրատէր զորքերակներուն մէջ, կը տեսնէր թէ երջանկութեան յանդուգն անուրջներ, կ'անցնէին իր առջեւէն : Յանկարծ իր երանութեան երազները աղօտացան :

— Խնդր եմ ես, ըսաւ արմուկը անարին վրայ դնելով, այն անմեղ արարածը, զոր քու գեղեցիկ խօսքերդ հրապուրեցին, անդարձօրէն քեզի կապել կուզէիր, սառ թշուառութեանդ շղթայել երիտասարդութեան այն չքնաղ ծաղիկը : Եւ եթէ ան քեզի նմանող աղաքներ տար՝ իրենց հօրը վրայ ծանրացող անէծքը մշանջնաւորելու համար, եթէ անանէր այն շողաշուն աչքերուն արջունքներով քողարկուիլը, պիտի ըսէիր ինքնիրենդ . «Այս արջունքները քու ետսիրութեանդ, յիմարութեանդ առաջ կուգան :» Այն ատեն միթէ հաղար անդամ աւելի թշուառ չպիտի ըլլայիր, ինչ որ չես հիմա քու համակերպութեանդ ու խրոխտ առանձնութեանդ մէջ : Ի՞նչ կը մնայ քեզի, ո՛վ երջան-

կութեան ժառանգազուրկ որդի, եթէ ոչ միութարութիւնը՝ գիտնալու թէ կը առաւպիտ առանց այդ երջանկութեան արժանացած ըլլալու : Ի՞նչպէս կը սպասես այն օրուան, ուր այլեւս չպիտի կրնաս աչքերդ դէպ ի երկինք բարձրացնել, եւ ուր իրաւունք չպիտի ունենաս հարցնելու անոր . «Ի՞նչ ըրի քեզի որ այսչափ անողորմաբար կը վարուիս հետս . . . »

Ժամ մը կեցաւ այսպէս մտախոհ : Յետոյ վերստացաւ իր հանդարտութիւնը, որ խոր հանդիստի մը փոխուեցաւ տակաւ : Անոր օգնութեան հասաւ այն արուեստը, զոր արդէն այնչափ անգամներ ի դորձ դրած էր, եւ որուն շնորհիւ իրմէ կը հեռացնէր իր մասին ամէն սխալ գաղափար : Վերջապէս քնացաւ, սակայն քնանալէն առաջ հետեւեալ որոշումը հաստնացուց մտքին մէջ . «Խոյս տալ այսուհետեւ համակրելի աղջկան հետ հանդիպում ունենալէ, ու փոխադրուիլ ուրիշ սենեակ մը ուրկէ ո՛չ կարենար անոր երեսը տեսնել ո՛չ ալ անոր ձայնը լսել :»

* * *

Յուզումնալից երազներով տանջուելէ ետքը ուշ ատեն արթնցաւ, եւ իր բոլոր տառապանքները հիմա աւելի կը զգար : Առտուան ժամերը շատ արուր դարձած էին իրեն համար : Դժուարաւ անկողնէն ելաւ, թիկնաթոռի մը վրայ ինկաւ՝ խորհելու համար թէ ինչ տեսակ աշխատանքով պիտի կրնար մտքէն հեռացնել այն տաժանիկի ցնորքը : Որուն որոշած էր գիմադրել : Լսեց որ դուռը կը դարնէին . Բիէթրօն էր, իր ծերունի սպասաւորը, որ եկած էր ըսելու թէ քաղաքացի մը տեսակցիլ կ'ուզէր երիտասարդ Ճիաքօֆօ կոմսին հետ . այս մարդը պիտի խօսէր հին նկարի մը վրայ . զոր անոր ցոյց տալ կ'ուզէր եւ ներում կը ինչդէր որ համարձակութիւն ունեցած է գալու ներկայանալու Պարոն կոմսին : Քաղաքացի մէ՞կը . կը ճանչնա՞ր զայն :

Այցելուն Լուիճին ուրիշ մէկը չէր կրնար ըլլալ, այն փեղուրագործը որուն կը պատկանէր դէմի տունը :

Լէօբարտի ոտքի ելաւ անմիջապէս . սիրտը արագ արագ կը բարախէր, եւ հագիւ կրցաւ նշանացի հասկցնել Բիէթրօյին, թէ կրնար հիւրը ներս առաջնորդել :

Բաղաքացիի մը պէս պարզ՝ բայց վայելուչ հագուած մարդ մը ներս մտաւ, յարգանքով դուրսը խոնարհեցուց, բայց ոչ առանց ընտանի համարձակութեան մը, որով իբր թէ ըսել ուզած ըլլար. «վաղուց կը ճանչնանք զիրար» յետոյ կոմսին մօտեցաւ, բրտացած եւ արեւակէջ ձեռք մը երկնցնելով անոր:

— Սինեօր Բոնթինօ, ըսաւ օտարականը, կը խնդրեմ որ ներողամիտ ըլլաք թախանձանքիս համար, բայց ոյժը կը ձկէ երկաթը: Պարօն Կոմսը ճանչցած եմ այն ժամանակէն, երբ ինքը մանկական միջազգեստ կը հագնէր դեռ. առկէ զատ, չատ մօտ դրացի ենք իրարու. ամէնքս ալ Ագամի զաւակներն ենք, եւ պէտք է օգնենք իրարու. այսպէս կը պատուիրէ արդէն մեր սուրբ կրօնքը: Ուստի կը յուսամ թէ շատ գէշ չէք նկատեր ընթացքս, իմ սիրելի երիտասարդ Պարօն Կոմս, Պիտի ըսէք թէ ինչո՞ւ: Չէի կրնար սակայն գործը պատմել Բիէթրոյին որ զայն իսկոյն պիտի հաղորդէր Սօֆիային կամ Մարթինային, եւ անոնց ըսել թէ ուղղակի մեր խեղճ աղջկնակին քովէն կուգամ խնդրելու համար Պարօն Կոմսէն որ ի նկատ առնէ իր վիճակը: Անա թէ ինչո՞ւ համար խորհեցայ նկարին խօսքը ընել: Թող սր յիշեալ նկարը իրօք քովս է, Սինեօր քիաքօմօ, եւ եթէ Պարօն Կոմսը բարեհաճի իր ներկայութեամբ պատուել զիս, զայն ցոյց պիտի տամ իրեն, ինչպէս ըսի Բիէթրոյին, հազուադիւրս ըսն մըն է զոր կ'արժէ տեսնել: Բայց թերեւս չափազանցած ըլլամ քիչ մը, թէ եւ դարձեալ իր արժէքը ունի երբ տարիներու ազատէն մաքրուի: Եթէ գնահատող մը պատահէր, կրնայի 100 - 200 ոկուտ կորդել անկէ: Բայց կը խոստովանիմ թէ լոկ պատրուակ մըն է ստիկա: Պիտի փափաքէի որ Պարօն Կոմսը հաճէր գալ իրատեղ իմ պզտիկ խնդ աղջկիս, Ներինան, եւ կը յուսամ թէ Պարօն Կոմսը պիտի խղճայ խեղճուկ դրացիի մը, ընտանիքի հօր մը վրայ, որ իր տարտամ կացութեանը մէջ միակ զաւակէն զատ ուրիշ սիրտփանք չունի:

— Ի՞նչ կը պակսի ձեր աղջկան՝ Ներինային, եւ ես ի՞նչ կրնամ ընել անոր օգտին, թոթովեց Լէօրարտի:

— Կը տեսնէ՞ք, բարի պարօն, յարգեղջուկը, ձեռքը ամուր զարնելով ակոթին զոր երիտասարդը կը ներկայացնէր անոր: զիտէք անշուշտ թէ անիկայ աշխարհի ամենէն բարի արարածն է, անգին պզտիկ գանձ մը: Շատ ամիսներէ ի վեր չոյզն ձանձորի մը անգամ չէր պատճառած մեզի, մեր խեղճուկ սեղանին ամէնէն համեղ կերակուրն էր մեր պատուհանին ամէնէն գեղեցիկ ծաղիկէր: Շատ ինկած վիճակ մը ունինք մեր դռարը կորսնցնելէն ի վեր, — թո՛ղ ձեր Շնորհափայլութիւնը հաճի ատար վրայ մտածել: — Կարգ մը վառչուէրներ գէշ կացութեան մէջ գրին զիս. այն ժամանակէն ի վեր, առեւտուրս գրեթէ առաջ չերթար, ոչ ալ որ եւէ մէկ ձեռնարկութիւնս: Արդ, Անքօնայի մէջ հօրեղբօրորդի մը ունիմ որ շատ պատուաւոր վաճառական մըն է: Անթօնիօ անուշով աղայ մը ունի, բարեբարոյ ու պատկերի պէս գեղեցիկ երիտասարդ մը. ան օժտուած է բոլոր այն բարեմասնութիւններով, որոնք կը յատկանիչեն տանուէրն ու դործի մարդը, եւ ամենքը կ'ըսեն թէ հօրմէն տասնապատիկ աւելի պիտի հարստանայ: Մեր ազգականութեան պատճառաւ, եւ թերեւս մեր օրիորդին վրայ լուրեր տաւ ըլլալուն համար, իբր տարի մը առաջ, այս Անթօնիօն Բիէթրոյի կուգայ, մեր Ներինան կը տեսնէ ու խոնթի պէս կը սիրահարուի անոր:

(Շարունակելի)

ՈՒՂՂԵԼԻ

«1902 յիստուար 2» յօդուածին մէջ Մասիսի նախորդ թիւով հրատարակուած, երես 226, Ա. սիւնակ, տող 7, իր հոգւոյն պէտք է կարգալ իր հաշուոյն. — նոյն երես, Բ. սիւնակ, տող 42, հշանակութեան ու ներգործութեան գործի պէտք է կարգալ միութեան ու հիւրագրին տուած քաւոր հշանակութեան ու ներգործութեան գործի. — եւ երես 228, Բ. սիւնակ, տող 25, ու բարդ պէտք է ջնջել:

Արտօնատէր Կ. Ս. Ի. Թ. Ի. ՃԵՄՆ

Տպագրութիւն Գ. Մ. Ս. ՏԹԻՍՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսըլար եօգուշու, Թիւ 27

Ա Ր Ի Ս ԵՒ ԸՆԿ

ՇՈՓԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՋԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Վաճառքի

Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանաւոր հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի սարք օժանդներ :

Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանքայ գէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիններու գերազանց ամանութիւնը : Փափաքողներուն՝ քաթալօղ ձրի կը ղրկուի :

Մեծաքանակ գնումք ընել ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՈՍՏԻ ՊԱՔԵՒԻ Կ. ԻՆՃԻՃԻՆԱՆ ՈՐԴԻՔ վաճառատունները , իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ , ուր պիտի գտնեն նմոշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով :

ԲԱՐԻՉ.—ՊՊ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շարփուէոն :

ՊՈՐՊԱՑ.—ՊՊ. Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔԱՆԻՐԻԱ.—Պ. Մ. Գալփաեան :

ԳԱՀԻՐԷ.—Պ. Հ. Ռոզանբալ :

ՌՈՒՍՃՈՒԳ.—Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք :

ՎԱՌՆԱ.—Պ. Կեռօն Արտիքի :

ԻՋՄԻՏ.—Պ. Յակոբ Մոմճեան :

ՀՄԻՒՆԻԱ.—Պ. Հայնրիխ Վառնիկ :

ՍԵԼԱՆԻԿ.—Պ. Տիմօ Ֆերմանտեգ :

ԻՒՍԿԻԻՊ.—Պ. Մ. Բափուանօ :

ՊԷՅՐՈՒԹ.—Պ. Յրանքի Շիֆֆեր :

ՍԱՄՍՈՆ.—Պ. Պ. Պետրոսեան եղբարք :

ՏՐԱՊԵՋՈՆ.—Պ. Արիս Կ. Ինճիճեան :

ՍԵՐԱՍՏԻԱ.—Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան :

ՌՈՏՈՍԹՈ.—Պ. Պ. Յակոբ Բոսփատալ :



ՌՈՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ

34,775,642 ֆրանք

երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կերօնացեղի, Ղալաթիոյ քաղաքի մը, Մաթաթան հին տեղ

Ընդհ. Բնօրէն
Ա. ՀԻՒՐՄԻԻՉ

Ընդհ. Գործակալ
ԹԷՈՏՈՐ ՌԷԲԵԼ



ՃԵՅԼԱՆ

(ՌՈՒԲԷՆ ՄԱՂԱՔԵԱՆ)

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՑ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Պոլիս, Սուլթան Համամի հրապարակին վրայ
Փիևքո խանին հոռար, թիւ 2



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, յայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ունենալ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

ՄԻՆԿԷՐ

Չեմքի, ուքի եւ ձեռքի ու ուքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. որչա՛ն մեքենան ամենեւեւ կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին, ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ։

ՄԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ԲԵՐԱ, Մեծ Իողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին Կայարանին Դիմաց.

ԳՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Գէյազիտ.

Դասերը իւր նորոգութիւնք ձգի.

Կասաբեալ | Երաւաւորութիւն

Մասնաճիւղեր զանաւանազան բոլոր քաղաքներուն մէջ

ՆԱԲԵՐՈՒԹԻՒՆ
ՄԱՍՆԱՎՃԱՌՈՒՄՆԵՐ